ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս Հ. Անդրեասյան 4
Հեռ.՝ (0269)22031, էլ. փոստ.՝ vardenis.gegharquniq@mta.gov.am

09 սեպտեմբերի 2025թ.

«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ տնօրեն
Գ.Ներսիսյանին
ՀՎՀՀ 04215828
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Բերքանուշ
Հեռ. 055-80-16-33
e-mail: avetisxeci@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Ներսիսյան,

Վարդենիսի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-24/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 21.06.2024թ. Վարդենիսի համայնքապետարանի և «Ավետիս-Խեցի» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-24/20-1 ծածկագրով պայմանագիր: Պայմանագրով «Ավետիս-Խեցի» ՍՊԸ-ը պարտավորվել է իրականացնել Վարդենիս քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի (Լեռնագործներ 1/1, Խ. Ստեփանյան 9, Հ. Արզոյան 2 և 9 հասցեներ) տանիքների հիմնանորոգման աշխատանքները:

Ըստ 13.12.2024 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի՝ շինարարական աշխատանքները համարվել են մեկնարկած, սակայն մինչ 28.08.2025 թ. որևէ աշխատանք չի կատարվել: Պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացության հիման վրա Վարդենիսի համայնքապետարանը նախաձեռնում է պայմանագրի միակողմանի լուծարման (ամբողջությամբ) գործընթացը՝ պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի

հիմքով (կապալառուն չի սկսել աշխատանքները կամ դրանք իրականացնում է այնպիսի դանդաղությամբ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է անհնար)։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ավետիս-Խեցի» ՍՊԸ-ին առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո **5 (հինգ) բանկային օրվա ընթացքում** Վարդենիսի համայնքապետարանի գանձապետական **հաշվեհամարին՝ «900155101091»,** փոխանցել պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները։

Պայմանագրի լուծման արդյունքում վճարման ենթակա գումարներն են.

- Պայմանագրի կատարման ապահովման գումար – 10,117,000 (տասը միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ**,**
- Որակավորման ապահովման գումար – 15,175,000 (տասնհինգ միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ**:**

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվեն Վարդենիսի համայնքապետարանի վերոնշյալ հաշվեհամարին, ապա Ձեր նկատմամբ չի կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները։

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում։

Հարկ ենք համարում նաև նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում։

Ստորագրող

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2611640181

2025-09-09 15:30:35 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից